ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի
2017թ.-ի ապրիլի 03-ի թիվ 06/05Լ որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի կողմից հաստատված՝ ռիսկերի վրա հիմնված բանկի Ներքին աուդիտի 2016թ.-ի Աշխատանքային ծրագրի համաձայն, Ներքին աուդիտի կողմից իրականացված բանկի գործարար գործընթացների ծրագրային և նպատակային ստուգումների շրջանակներում՝ Ներքին աուդիտի կողմից իրականացվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ ստուգումներ և գնահատումներ:

Ստուգումների նպատակն է եղել գնահատել բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը, որի նպատակով ստուգվել են ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Ներքին հսկողության համակարգի ստուգումները ներառել են նաև բանկում՝ ՀՀ կենտրոնական բանկի, Արտաքին և Ներքին աուդիտի ստուգումների արդյունքներով արձանագրված խնդիրների վերացման և դրանց գծով տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ բանկի կողմից իրականացված գործընթացները:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն են ընձեռում արժանահավատ կերպով գնահատել բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն, համաձայն որի բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության արդյունավետ և գործուն համակարգի շարունակական զարգացման գործընթացին:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ Ներքին աուդիտի կարծիքով 2016թ.-ի գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ /
Գլխավոր աուդիտոր՝ **Հովհաննես Հովհաննիսյան**